16446

361
A-64

1906

7140
Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
361
Թ-64

# ՀԱՇԻՒ

## ԹԻՖԼԻԶԻ

# ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## 1905 Թ.

ՔՍԱՆՈՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

361
Թ-64

ԹԻՖԼԻԶ
Տպարան «ՀԵՐՄԵՍ» Ընկ. Մադաթեան փողոց № 5.
1906

2010

370
2098-ՀԱ

Дозволено цензурою. 9-го Марта 1906 г. Тифлисъ.

2002

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան պատուաւոր անդամներ՝ պ. Ա. Քիշմիշեան
տ. Վ. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

**Ատենապետուհի՝ տ. Վ. Ռոտինեան**
**Փոխ-Ատենապետուհի՝ տ. Հ. Մարտիրոսեան**

Անդամներ

**տ. Մ. Ցուրինեան**
**տ. Ն. Ղամբարեան**
**տ. Մ. Մելիք-Կարագեօզեան (քարտուղար)**
**տ. Մ. Խատիսեան**
**տ. Ս. Օհաննէսեան**
**իշ. Մ. Բէհբութեան**
**տ. Վ. Միլեան (գանձապահ)**

Փոխ-անդամներ

**տ. Կ. Լիսիցեան**
**տ. Ե. Առաքելեան**

**տ. Վ. Եսայեան**
**տ. Ս. Էմինեան**

Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ

**տ. Հ. Ալթանդլեան**
**տ. Ս. Բարխուդարեան**
**տ. Ս. Աբրահամեան**

Փոխ-անդամներ

**տ. Մ. Միրիմանեան**
**իշ. Ս. Արղութեան**

## ՄԻԱՆՈՒԱԳ ՎՃԱՐՈՂ ԳՈՐԾԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

տ. Ալիբէկեան Նունէ
տ. Ալիխանեան Նադեժդա
տ. Աղաբէկեան Մարիամ
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Մարիամ
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Մարիամ
տ. Ադելխանեան Հեղինէ
տ. Աւթանիլեան Հեղինէ
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաբայեան Վարվառէ
իշ. Բէհբութեան Կատարինէ
իշ. Բէհբութեան Վարվառէ
† ~~իշ. Բէկթաբէկեան Մարիամ~~
† ~~իշ. Դոլուխանեան Եղիսաբէթ~~
տ. Եւանգուլեան Վարվառէ
տ. Երալեան Կատարինէ
† ~~Էմինեան Աննա~~
տ. Թայիրեան Եղիսաբէթ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Ծովիանեան Մարիամ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Ղորղանեան Նունէ
տ. Մանթաշեան Դարիա
տ. Մարկոսեան Կատարինէ
տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
տ. Մեհրաբեան Կատարինէ
տ. Միլեան Վարվառէ
տ. Մութաֆեան Շողակաթ
տ. Յակովբեան Կատարինէ
տ. Նազիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
տ. Շադինեան Քալի
† ~~Չիթախեան Սոֆիա~~
տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Աննա
տ. Ռոտինեան Վարվառէ
տ. Սարուխանեան Ուստինիա
տ. Սաֆարեան Նատալիա
տ. Վարդանեան Աննա
ա. Վարդանեան Նունէ
տ. Տէր-Առաքելեան Եւգինէ
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Օհաննէսեան Շուշանիկ

## ԳՈՐԾԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

### Ա

իշ. Աբամելիքեան Դարիա
ա. Աբեսալոմեան Նունէ
տ. Աբրհամեան Սոֆիա
տ. Աբովեան Նոյեմզար
տ. Աւետեան Ոսկի
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Ամբարդանեան Թամար
օր. Աբիեան Մարգարիտ
10 տ. Աղայեան Նատալիա
տ. Անանեան Մարիամ
տ. Անանեան Օլգա



իշ. Արղութեան-Երկայնաբարգուկ Նադեժդա
իշ. Արղութեան-Երկայնաբազուկ Սոֆիա
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Առստամեան Հեղինէ

### Բ

տ Բաբանասեան Թամար
տ. Բաբանեան Նատալիա
20 տ. Բաղիլ Աննա (Նոր անդամ)
տ. Բաղդասարեան Սոֆիա (Նոր անդամ)
օր. Բայտողեան Շուշանիկ
տ. Բարխուդարեան Վարդուհի
տ. Բարխուդարեան Եղիսաբէթ
տ. Բարխուդարեան Սաթէնիկ
իշ. Բէհբութեան Սոֆիա
իշ. Բէհբութեան Մարիամ
† իշ. ~~Բէկթաբէկեան Եղիսաբէթ~~
իշ. Բէկթաբէկեան Աննա
30 տ. Բերէնս Մարիամ
տ. Բոզարջեան Մարիամ

### Գ

տ. Գէորգեան Եղիսաբէթ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գիրգիդեան Եղիսաբէթ
օր. Գոզալեան Օլգա
տ. Գոզալեան Եղիսաբէթ
տ. Գասպարեան Սարրա

### Դ

տ. Դաւթեան Մարիամ
տ. Դաւթեան Քալի
40 օր. Դոլուխանեան Օլգա
տ. Դոլուխանեան Նունէ

### Ե

տ. Եակուլեան Նատալիա
տ. Երամեան Հռիփսիմէ
տ. Երզնկեան Սիրանոյշ
տ. Եսայեան Վարվառէ (Նոր անդամ)
տ. Երէցփոխեան Սոֆիա

### Զ

տ. Զարգարեան Նունէ

### Է

իշ. Էրիստովա Կատարինէ
տ. Էնիկոլոփեան Եղիսաբէթ
50 տ. Էնիկոլոփեան Նատալիա

### Ի

տ. Իգիտխանեան Նունէ (Նոր անդամ)
տ. Իզմայիլեան Աննա
տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իւզբաշեան Սոֆիա (Նոր անդամ)

### Լ

տ. Լալայեան Հայկանոյշ (Նոր անդամ)
տ. Լիսիցեան Կատարինէ

### Խ

տ. Խաչատրեան Նունէ
տ. Խարազեան Մարիամ
տ. Խալաթեան Կատարինէ
60 տ. Խանդամիրեան Նատալիա
տ. Խուդադեան Մարիամ
տ. Խուդաւերդեան Սոֆիա

### Ծ

տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Ծովիանեան Լիւբով
տ. Ծուրինեան Ալեքսանդրա
տ. Ծուրինեան Մարգարիտ

### Կ

տ. Կարախանեան Մարիամ
տ. Կուզանեան Աննա
տ. Կուսիկեան Մարիամ
70 տ. Կուկուջանեան Աննա

### Հ

տ. Համբարձումեան Կատարինէ
(Նոր անդամ)
օր. Համլինգ Մերի
տ. Հաքիմեան Մարիամ
օր. Հախվերդեան Աննա
օր. Հախվերդեան Մաննա

### Ղ

տ. Ղազազեան Սոֆիա
տ. Ղորղանեան Աննա
օր. Ղորղանեան Մարգարիտ
տ. Ղորղանեան Կատարինէ
80 տ. Ղուլիջանեան Մարիամ
տ. Ղլտճեան Սաթենիկ
տ. Ղուլազեան Վարվառէ
տ. Ղուլեան Դարիա
տ. Ղուլեան Աննա
(Նոր անդամ)

### Մ

տ. Մայսուրեան Նատալիա
օր. Մատինեան Մարիամ
օր. Մելիք-Ազարեան Սոֆիա
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
օր. Մելիք-Հայկազեան Հեղինէ
90 տ. Մ.-Կարապետեան Մարիամ
տ. Միքայէլեան Մարիամ
(Նոր անդամ)
տ. Միրզոյեան Նունէ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Մնացականեան Փառանձեմ
տ. Մուրադեան Հռիփսիմէ
(Նոր անդամ)
տ. Մուստաֆեան Լիւսի
(Նոր անդամ)
100 տ. Մեանիկեան Եղիսաբէթ
տ. Մելիք-Մարութեան Աննա
տ. Մելիք-Մարութեան Լուսաբեր

### Յ

տ. Յակոբեան Շուշանիկ
տ. Յակոբեան Սոֆիա



տ. Յակոբեան Նունէ
տ. Յարութիւնեան Երանուհի
տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Յովհաննիսեան Դարիա

### Ն

տ. Նազարբէգեան Հեղինէ
(Նոր անդամ)

### Շ

110 տ. Շադինեան Վարվառէ
տ. Շահ-Նազարեան Նատալիա
տ. Շահ-Նազարեան Սոֆիա
տ. Շահ-Մուրադեան Սոֆիա
տ. Շահ-Պարոնեան Ռոզալիա

### Ո

տ. Ուլանցեան Եւգինէ

### Պ

տ. Պսարեան Նունէ

### Ջ

† ~~տ. Ջանեան Եւգինէ~~

### Ռ

տ. Ռոտինեան Նատալիա

### Ս

տ. Սարեան Սոֆիա
120 տ. Սարուխանեան Եղիսաբէթ
տ. Սեանեան Աննա
տ. Սպանդարեան Կատարինէ
տ. Սիմոնեան Նունէ
տ. Սունդուկեան Սոֆիա

### Վ

տ. Վարդապետեան Նադեժդա
տ. Վարդպատրիկեան Օլգա
տ. Վահրամեան Եւգինէ
տ. Վերմիշեան Վարվառէ
(Նոր անդամ)

### Թ

տ. Թադէոսեան Վարվառէ
130 տ. Թադէոսեան Ռոզալիա
իշ. Թումանեան Մարիամ
տ. Թումաս Օսաննա
տ. Տէր-Աբրահամեան Մարգարիտ
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
տ. Տէր-Յարութիւնեան Դարիա
տ. Տէր-Դաւթեան Թեկղի
տ. Տէր-Դաւթեան Եղիսաբէթ
տ. Տէր-Ջանեան Սոֆիա
տ. Տէր-Օհաննէսեան Նատալիա
140 տ. Տիգրանեան Նադեժդա
տ. Տիգրանեան Նատալիա

### Ց

տ. Ցիցիկեան Էփեմիա

### Փ

տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փրիդոնեան Մարիամ

Ք

տ. Քալամքարեան Թամար
տ. Քալանթարեան Մարիամ
տ. Քալանթար Սոֆիա
տ. Քամոյեան Եղիսաբէթ
տ. Քաթանեան Կատարինէ
150 տ. Քիշմիշեան Թամար

Օ

տ. Օթարեան Սոֆիա

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ

| | 1904 թ. | 1905 թ. |
|---|---|---|
| Անձեռնմխելի դրամագլուխ . . | 11,300 ռ. | 11,300 ռ. |
| Յատուկ » . . . | 3,500 » | 3,500 » |
| Պահեստի » . . . | 8,500 » | 8,500 » |
| Ծախսի գումար . . . . . . . . | 2,513 » 88 կ. | 1,522 » 42 կ. |
| Ընդամենը | 25,813 ռ. 88 կ. | 24,822 ռ. 42 կ. |
| Ընկերութեան խնամատարը· Շարժական կայք· . . . . | 1,135 ռ. 05 կ. | 1,205 ռ. 05 կ. |
| Ձեռագործի համար նիւթեր և պատրաստի հագուստ . . . | | 460 ռ. 86 կ. |

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

## 1905 թ. յունվարի 1-ից մինչև 1906 թ. յունվարի 1-ը

| Մուտք | 1905 թ. նախահաշիւ | Առանձին Ռուբ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռուբ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|---|
| ա. Անդամավճարներ | | | | | |
| Տ. ա. Ուստինիա Սարուխանեանից և Նունէ Ղորղանեանից միանուագ . | 300 | 300 | | | |
| 152 գործադիր անդամներից . . . . | 1050 | 912 | | 1212 | |
| բ. Նուիրատուութիւններ | | | | | |
| Իշ. Մ. Բէհբուդեանից ի յիշատակ հանգուցեալ մօրը . . . . | | 25 | | | |
| Եղբ. Բոզարջեաններից ի յիշատակ հանգուցեալ հօրը . . . . | | 200 | | | |
| Պ. Յ. Ղորղանեանից ի յիշատակ հանգուցեալ եղբօրը . . . . | | 100 | | | |
| Տ. Ե. Եղիազարեանից ի յիշատակ հանգուցեալ ամուսնու . . . | | 150 | | | |
| «Եղբ. Միրզոյեաններ և Ընկ.» Նաւթ. ընկերութիւնից . . . . . . . | | 500 | | | |
| Հանգուցեալ Ս. Մելիքեանի իրեղէնների վաճառումից. . . . | 400 | 44 | | 1019 | |
| գ. Պարահանդէսներից, վաճառքներից եւ այլն. | | | | | |
| 1904 թ. դեկտ. 19-ի պարահանդէսից ապառիկ . . . . . . . . | | 26 | 80 | | |
| Մայիսի 6-ին Թիֆ. ժողովարանում սարքած զբօսանքից . . . . | 2650 | 1170 | 17 | 1196 | 97 |
| դ. Ընկերութեան գումարների տոկոսը | 900 | — | — | 930 | 05 |
| ե. Կարուձեւի արհեստանոցի պատուէրներից եկամուտ | 1100 | — | — | 681 | 60 |
| զ. Ձեռագործների վաճառքից | 300 | | | 234 | 53 |
| Գումարն է . . . | 6700 | | | 5274 | 15 |
| Նախորդ տարուանից մնացած գոյք . . | | | | | |
| Պետական խնայողական գանձարանում | | 1681 | 49 | | |
| Առձեռն դրամ գանձապահի մօտ. . | | 832 | 39 | | |
| 23,300 ռ. ն. գ. տոկոսաբեր թղթեր, որ գնուած է և ընդունուած | | 22988 | 44 | 25502 | 32 |
| Ընդամենը . . . | | | | 30776 | 47 |

| Ելք | 1905 թ. նախահաշիւ | Առանձին Ռուբ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռուբ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|---|
| ա. Կարուձեւի արհեստանոցի ծախսեր. | | | | | |
| Վարպետուհիներին ռոճիկ . . . . . . | 3380 | 3453 | 24 | | |
| Ծառաներին ռոճիկ . . . . . | 324 | 316 | 50 | | |
| Բնակարանի վարձ և ջրի փող . | 1000 | 1000 | | | |
| Կարուձևի արհես. կահ-կարասիք և վերան. | 100 | 72 | 30 | | |
| Վառելիք . . . . . . . . . | 100 | 189 | 40 | | |
| Մանր ծախքեր . . . . . | 91 | 85 | 05 | | |
| Աշակերտուհիների զբօսանքների համար . | 50 | 32 | 40 | | |
| Մոսկվայից բերած նիւթերի համար . . | | 278 | | | |
| Նախապատրաստական ձեռագործների համար նիւթեր . . . . | 50 | 66 | 11 | | |
| Վաճառքի համար նիւթեր . . | 240 | 79 | 89 | | |
| Մասնագիտական օրագրեր կարուձևի համար . . . . . . . | 27 | — | — | | |
| Դեղօրայք . . . . . . . . . . | 60 | 27 | 13 | | |
| Բանուորուհիների օգտին հանած տոկոսը | | 102 | 25 | 5602 | 27 |
| բ. Չքաւորներին նուիրատուութիւններ | | | | | |
| Ջնդեան և Ջատկին . . . . . . | 200 | 200 | | | |
| կ. Եւանգուլեանի, Ն. Փրիդոնեանի, Գ. Մութաֆեանի, Ն. Թամամշեանի և Մ. Մակարեանի անուան թոշակ. | 133 | 133 | | | |
| Չքաւոր աշակերտուհիներին զգեստ ևնպ. | 150 | 149 | 06 | | |
| Հայ-Թիւրքական կռուածից փախստականներ. | | 12 | 67 | 494 | 73 |
| գ. Դիւանական եւ տպագրական ծախսեր | 75 | 128 | 56 | | |
| դ. Տոմսակների պահելու եւ ապահովութեան | 50 | 40 | 05 | 168 | 61 |
| ե. Անձեռնմխելի գումարի համար յատկացրած | 670 | | | | |
| Ընդամենը . . . | 6700 | | | 6265 | 61 |
| Պետական խնայող գանձարանում մնում է *) | | 989 | 43 | | |
| Առձեռն դրամ գանձապահի մօտ . | | 532 | 99 | | |
| Անցեալ տարուանից տոկոսաբեր թղթեր | | 22988 | 44 | 24510 | 86 |
| Ընդամենը . . . | | | | 30776 | 47 |

*) Այդ գումարի մէջ է նաև կարուձևի արհեստանոցի ստացած պատուէրներից բանուորուհիներին հասանելիք մասը—36 ռ. 20 կ.

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1906 ՆԱԽԱՀԱՇԻՒԸ Թուի

| ՄՈՒՏՔ | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| 1. Միանուագ վճարող գործադիր անդամներից | 300 | |
| 2. Գործադիր անդամներից | 990 | |
| 3. Պարահանդէսներից, բազարներից և այլն | 2000 | |
| 4. Պատուէրներից եկամուտ | 800 | |
| 5. Ձեռագործների վաճառքից | 200 | |
| 6. Տոկոսիք Ընկերութեան գումարներից | 900 | |
| 7. Նուիրատուութիւններ | 200 | |
| Ընդամենը | 5390 | |

| ԵԼՔ | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| 1. Վարպետուհիներին ռոճիկ | 3620 | |
| 2. Ծառաներին ռոճիկ | 294 | |
| 3. Բնակարանի վարձ | 1000 | |
| 4. Մանր ծախքեր և վերանորոգութիւններ | 100 | |
| 5. Վառելիք | 100 | |
| 6. Դեղեր | 25 | |
| 7. Տարազի ամսաթերթեր | 20 | |
| 8. Ձեռագործների նիւթեր | 125 | |
| 9. Տօներին նուիրատուութիւններ | 100 | |
| 10. Թոշակառուներին | 133 | |
| 11. Չքաւոր բանուորուհիներին զգեստ | 100 | |
| 12. Դիւանական և տպագրական ծախսեր | 100 | |
| 13. Տոմսակներ պահելու և ապահովեցնելու | 50 | |
| 14. Բանուորուհիների օգտին հանած գումար | 100 | |
| Ընդամենը | 5867 | |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի՝ կայացած *1905* թ. մարտի *27*-ին։

*1905 թ. մարտի 27-ին կայացաւ Թ. Հ. Բարեգործ. Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը 55 անդամուհու ներկայութեամբ։*

*Վարչութեան ատենապետուհի տիկ. Վ. Ռոտինեանցը ժամը 1-ին բացեց ժողովը և յայտնեց, որ թէև կարուձևի արհեստանոցի համար գետին գնելու և նոր շինութիւն կառուցանելու հարցը մտցրուած է այսօրուայ ընդհանուր ժողովի զբաղմունքի առարկաների մէջ, բայց այժմ այդ հարցը զարթեցնել չենք կարող, որովհետև ըստ կանոնադրութեան դրա լուծման համար անհրաժեշտ է ընկերութեան բոլոր անդամների գոնէ $^{1}/_{2}$-ի ներկայութիւնը, այսինքն 105 մարդու. բայց ներկայ թիւը հնարաւորութիւն է տալիս ընդհանուր ժողովին զբաղուելու ուրիշ հարցերով։*

*Այնուհետև վարչութեան ատենապետուհին առաջարկեց ժողովին ընկերութեան կանոնադրութեան § 35-ի համաձայն ընտրել ընդհանուր ժողովի համար նախագահ. ժողովն ընտրեց տիկ. Մ. Միրիմանեանին։*

*Վարչութեան անդամ իշխանուհի Մ. Բէհբութեանը կարդաց 1904 թ. մարտի 14-ի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը և Վարչութեան 1904 թ. գործունէութեան հաշիւը, որը և հաստատեց Ընդհանուր Ժողովը։*

*Կարուձևի արհեստանոցի կառավարչուհի տիկ. Ա. Կուզանեանը կարդաց արհեստանոցի 1903—1904 թուի գործունէութեան հաշիւը։*

*Վերստուգիչ յանձնաժողովի անդամ տ. Ս. Աբրահամեանը կարդաց վերստուգիչ յանձնաժողովի զեկուցագիրը, իսկ գանձապահ Վ. Միլեանը կարդաց Ընկերութեան 1904 թ. ելմուտքի հաշիւը, որ և հաստատեց Ընդհանուր ժողովը։*

*Ընկերութեան անդամ իշխանուհի Մ. Թումանեանը խնդրեց բացատրել թէ որքան ուսուցանող վարպետուհիներ կան կարուձևի արհեստանոցում և ինչ ռոճիկներ են ստանում նրանք, որի առթիւ*



*գանձապահ տիկ. Վ. Միլեանը կարդաց վարժուհիների ռոճիկների մանրամասն ցուցակը։ Այնուհետև իշխ. Մ. Թումանեանը իր անբաւականութիւնը յայտնեց, որ Թ. Հ. Բարեգ. Ընկերութեան կարուձևի արհեստանոցը աւարտողներից մասնագէտ վարպետուհիներ չեն պատրաստւում։ Այս առթիւ արհեստանոցի կառավարչուհի Կուզանեանը յայտնեց, որ ներկայ վարժուհիների կազմից 3 հոգի աւարտել են Թ. Հ. Բարեգործ. Ընկերութեան կարուձևի արհեստանոցը։*

*Վերստուգիչ յանձնաժողովի անդամ Ս. Աբրահամեանը առաջարկեց, որ ապագայում հաշիւների մէջ տպուէր նաև նախորդ տարուայ նախահաշիւը, որ ցանկացած դէպքում կարելի լինի համեմատել ընթացիկ նախահաշուի հետ։*

*Այս հարցի մասին մտքերը փոխանակելուց յետոյ ձայների մեծամասնութեամբ ընդունեց Ընկ. անդամ տիկ. Յարութիւնեանի առաջարկութիւնը, որը յարմար էր գտնում տպել նախորդ տարուայ ոչ թէ ամբողջ նախահաշիւը, այլ նորան աւելացնել անցեալ տարուայ նախահաշուի միայն աղիւսակը։*

*Ընկերութեան անդամի այն հարցին՝ թէ օրական քանի ժամ են կարում աշակերտուհիները, արհեստանոցի կառավարչուհին յայտնեց, որ նոքա կարում են $8^{1}/_{2}$-ից մինչև 3 ժամը, իւրաքանչիւր ժամ աշխատելուց յետոյ 5 րոպէ հանգստանալով և բացի դրանից կէս ժամ ընդմիջում նախաճաշի համար։*

*Ընկերութեան անդամ տիկ. Տիգրանեանը առաջարկեց, որ հաշիւների մէջ կարուձևի արհեստանոցի աշակերտուհիների մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ տպուեն։ Իսկ նորա այն հարցին՝ թէ չէ՞ կարելի արդեօք հէնց այժմ քննել արհեստանոցի համար գետին գնելու և շինութիւն կառուցանելու հարցը—առարկելով որ դժուար թէ երբևիցէ միանգամից հարիւր անդամ հաւաքուի—ատենապետուհի Վ. Ռոտինեանցը յայտնեց, որ կանոնադրութեան համաձայն իսկոյն այդ հարցը չենք կարող քննել, բայց Ընկերութեան Վարչութիւնը յոյս ունի Ընկերութեան անդամների աջակցութեան վրայ այս գործի մէջ և հաւատացած է որ ապագայում նրանց օգնութեամբ կարող է ձեռք բերել գետին և կառուցանել կարուձևի արհեստանոցի համար մի յարմար շէնք, առողջապահական պայմաններին համապատասխանող և հաւանականօրէն ոչ մի անդամ չի մերժի իր լուման տալու այս գործի համար։*

*Վարչութեան անդամ տ. Ն. Ղամբարեանը աւելացրեց, որ եր-*

կու տարուց յետոյ լրանում է Ընկերութեան 25-ամեակը և շատ ցանկալի է, որ այդ ժամանակ ունենանք մեր սեփական շէնքը։

Անդամ տ. Տիգրանեանը գտնում է, որ աւելի լաւ է կրճատել կարուձևի արհեստանոցի վրայ արած ծախսերը, բայց ոչ երբէք հրաժարուել գետին գնելուց և շինութիւն կառուցանելուց յիշեալ արհեստանոցի համար։

Վարչութեան անդամ տ. Մ. Ծուրինեանի այն հարցին՝ թէ ինչ միջոցներով է հնարաւոր գտնում տիկ. Տիգրանեանը կրճատելու ծախսերը, վերջինս յայտնեց որ բնակարանի վարձը մեծ է և կարելի է գտնել աւելի արժան բնակարան, բայց որ գլխաւորն է՝ ներկայ բնակարանը յարմար է Ընկերութեան Վարչութեանը։

Վարչութեան անդամ Մ. Ծուրինեանը խնդրում է Տիգրանեանին բացատրել իր արտասանած «յարմար» խօսքի միտքը, իսկ ատենապետուհին խնդրում է Տիգրանեանին յետ վերցնել իր խօսքը։

Ընկերութեան անդամ Ս. Քալանթարեանը ասաց, որ այստեղ Վարչութիւնը աչքի առաջ կարող է ունենալ միայն պատուիրատուների յարմարութիւնը և ոչ երբէք իրեն, Վարչութեան յարմարութիւնը։

Վարչութեան անդամ Ն. Ղամբարեանը յայտնեց, որ Վարչութեան անդամները շատ են աշխատել գտնել շինութիւն կարուձևի արհեստանոցի համար, և հէնց այժմ էլ զբաղուած են այդ հարցով, հետևում են յայտարարութիւններին տների վաճառման մասին և անձամբ գնում տեսնելու այդպիսի տները։ Իսկ այն առթիւ՝ թէ Վարչութիւնը շատ է վճարում արհեստանոցի բնակարանի համար, տ. Ղամբարեանը խնդրեց ներկայ եղող այն անդամներին, որոնք ունեն մասնաւոր ուսումնարաններ, այն է՝ Յարութիւնեանին, Արղութեանին, Ղուլիջանեանին և Լիսիցեանին, յայտնել այս առթիւ իրենց կարծիքները, և բոլոր վերջինները այն միտքը յայտնեցին, որ կարուձևի արհեստանոցի շէնքը բոլորովին թանկ չէ։

Ի նկատի ունենալով Ընկերութեան 25-ամեակի մօտենալը՝ տիկ. Յարութիւնեանը ցանկութիւն յայտնեց, ընդարձակել Ընկերութեան ծրագիրը և առաջարկեց խնդիր ներկայացնել դրա մասին Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ Դաշկօվին։

Վարչութիւնը յայտնեց որ այդ բանը նա աչքի առաջ ունի։ Այնուհետև Ընդհանուր Ժողովի ատենապետուհին առաջարկեց անդամներին ընտրութիւններ անել և յայտնեց որ կանոնադրութեան



համաձայն՝ Վարչութեան կազմից մի երրորդը պէտք է դուրս գայ վիճակով, ուստի և առաջարկեց ընտրել Վարչութեան 3 անդամ և 2 էլ փոխանդամ, նոյնպէս և Վերաստուգիչ յանձնաժողովի 3 անդամ և 2 փոխանդամ։

Վիճակով Վարչութեան անդամութիւնից դուրս եկան՝ Վ. Ռոտինեանց, Մարտիրոսեան և Շ. Լալայեան, փոխանդամութիւնից՝ Ս. Քալանթարեան և Մելիք-Հայկազեան. Վերաստուգիչ յանձնաժողովի անդամութիւնից՝ Հ. Աւթանդիլեան, Ս. Բարխուդարեան և Ս. Աբրահամեան, փոխանդամութիւնից՝ Մ. Միրիմանեան և Տ. Բաբանեան։

Ընդհանուր Ժողովը այնուհետև ձեռնարկեց ընտրութիւնների։ Վերաստուգիչ յանձնաժողովի ատենապետուհի Ե. Աւթանդիլեան առաջարկեց Ընդհանուր Ժողովին ընտրել տիկ. Վ. Ռոտինեանին—որպէս Ընկերութեան պատուաւոր անդամին—կրկին Վարչութեան անդամ առանց քուէարկութեան, որը և միաձայն ընդունուեց Ընդհանուր Ժողովից։

1504
15357

Տոմսակներով ընտրութիւնը հետևեալ արդիւնքը տուաւ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI · 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Վարչութեան անդամներ.

| | | |
|---|---|---|
| Վ. Ռոտինեանց | միաձայն | |
| Մարտիրոսեան | 39 | ձայնով |
| Ս Լալայեան | 37 | » |

Դրանց փոխանդամներ.

| | | |
|---|---|---|
| Վ. Եսայեան | 24 | » |
| Ս. Էմինեան | 15 | » |

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ.

| | | |
|---|---|---|
| Ե. Աւթանդիլեան | 28 | » |
| Ս. Բարխուդարեան | 28 | » |
| Ս. Աբրահամեան | 28 | » |

Դրանց փոխանորդներ.

| | | |
|---|---|---|
| Մ. Միրիմանեան | 24 | » |
| Արղութեան | 11 | » |

Ընդհանուր ժողովի նախագահ՝ Մ. Միրիմանեան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ Մ. Մելիք-Կարագեօզեան



## ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1905 Թ.

1905 թ. Թիֆ. Հայուհ. Բար. Ընկ. գործունէութիւնը գլխաւորապէս կայանում էր կարուձևի արհեստանոց պահելում, որտեղ հաշուետուութեան տարին կարուձև էին սովորում 123 աշակերտուհի՝ 5 վարպետուհու և 1 փոխ-վարպետուհու ղեկավարութեամբ։

1905 թ. յունիսին կար ու ձևի արհեստանոցի դասընթացն աւարտեցին վարպետուհու կոչումով հետևեալ աշակերտուհիները. Ադելխանեան, Գասպարեան, Գալստեան, Դևոյեան, Կիւրեղեան, Լալայեան, Մինասեան, Յովհաննիսեան, Նալբանդեան, Սաֆարեան, Թաթուլեան, Թարխանեան և Թոփչեան։

1905 թ. պատուէրներից Հ. Բ. Ընկ. օգուտ ստացաւ 681 ռ. 60 կ., որից վերջին բաժանմունքի աշակերտուհիներին տուեց 0/00/0 —102 ռ. 25 կոպէկ։

1904 թւին կարուձևի արհեստանոցին կից բացուած գործանոցը, որտեղ նորաւարտ վարպետուհիներից մի քանիսը օր. Թարխանեանի ղեկավարութեամբ պատուէրներ էին ընդունում և կատարելագործւում իրանց արհեստի մէջ՝ վարպետուհիների ընտանեկան հանգամանքները պատճառով փակուեց այդ գործանոցը անորոշ ժամանակով։

Բացի նրանից, որ ընկերութիւնը ձրի է ուսուցանում կարուձևի արհեստը չքաւոր աղջիկներին, այլ և հնար եղածին չափ օգնում է նրանց՝ տալով հագուստ, կօշիկ, դեղորայք և կարուձևի պիտոյքներ։

Զատկի և Ծննդեան տօներին կողմնակի չքաւորներին տրուած է միանուագ օգնութիւն, իւրաքանչիւրին ոչ պակաս 3 ռուբլուց—ընդամենը—200 ռուբլի։ Թոշակաւորների վրայ ծախսուած է 133 ռուբլի, իսկ հայ-թուրքական կռուածից վնասուածների՝ 12 ռ. 67 կ.

1905 թ. կարուձևի արհեստանոցի չքաւորների թւում կային 7 թոշակաւոր աշակերտուհիք, այն է՝ յանուն տիկ. Կ. Եանգուլեանի—Տարախչեան, յանուն Կ. Մուստաֆեանի—Խաչատրեան, և Կիւրեղեան, յանուն Մ. Մակարեանի—Իշխանեան և Ուլուբէգեան, յանուն Ն. Փրիդոնեանի—Գալստեան և յանուն Ն. Թամամշեանի—Գրիգորեան։

1905 թ. յօգուտ ընկերութեան տրուած են հետեւեալ նուիրատուութիւնները.—Եղբարք Միրզոյեան և ընկ. նաւթարդիւնաբերական ընկերութիւնից—500 ռուբլի, իշխանուհի Մ. Բեհբութեանից իւր հանգուցեալ մօր յիշատակին—25 ռուբ. Ի. Կորգանեանից իւր հանգուցեալ եղբօր յիշատակին—100 ռուբ., տ. Կ. Եղիազարեանից իւր հանգուցեալ ամուսնու յիշատակին—150 ռ., եղբայր Բոզարջեաններից իրանց հանգուցեալ հօր յիշատակին—200 ռ. հանգուցեալ տիկ. Ս. Մելիքեանի իրեղէնները ծախելուց—44 ռուբլի։

1905 թ. ընկերութիւնն ունէր 150 իսկական անդամ 6-ական ռուբլի վճարող և երկու մշտական անդամ 150 ռ. միանուագ վճարող, այն է՝ տիկ. Նունէ Ղորղանեան և տիկ. Ուստինիա Սարուխանեան։

Բարձրագոյն հրամայուած հայ-եկեղեցական կալուածները վերադարձնելու հիման վրայ՝ Հայ. Բար. Ընկեր. վարչութիւնը խնդրագիր ներկայացրեց Քամոյեան և Ս. Նշան եկեղեցիների միացեալ հոգաբարձութեան—վերադարձնել ընկերութեանը Ս. Նշանի գաւթում գտնուող դպրոցական շինութեան վրայ ծախսուած 6000 ռուբլին կամ կապալով վերցնել դպրոցի շէնքը։

Յարատև գործադուլի և հայ-թուրքական կոտորածի պատճառով Վարչութիւնը ստիպուած եղաւ մի առ ժամանակ փակել արհեստանոցը, հետեւաբար զրկուեց պատուէրներից ստանալիք եկամուտի մի մասից։ Վարչութիւնը նոյն պատճառների շնորհիւ չկարողացաւ կազմել ձմեռային սովորական երեկոյթ ի նպաստ ընկերութեան, որով հաշուետուութեան տարին ունեցաւ պակասորդ (դեֆիցիտ) 1153 ռուբ. 46 կոպ. + 520 ռուբլի, որը ըստ կանոնադրութեան, պէտք է աւելանար անձեռնմխելի դրամագլխին։ Ուստի Վարչութիւնը ստիպուած եղաւ այս անգամ հանգանակութիւն բանալ, յուսալով հասարակութեան համակրութեան վրայ։

Հաշուապահութեան վարժուհու՝ տիկ. Յովհաննիսեանի հեռանալու պատճառով, հրաւիրուած է տ. Ե. Զօրեան։

Վարչութիւնը իր պարտքն է համարում խորին շնորհակալութիւն յայտնել բժ. Վ. Արծրունուն, որ շարունակում է ձրի բժշկել արհեստանոցի աշակերտուհիներին։



## ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1904—905 ՈՒՍ. ՏԱՐՈՒԱՑ.

1904 թ. սեպտեմբերին արհեստանոցում կային 123 աշակերտուհի, որոնք հետեւեալ կերպով էին տեղաւորուած դասարաններում.

| | | | |
|---|---|---|---|
| I | բաժանմունքում | 32 | աշակ. |
| II | » | 30 | » |
| III | » | 30 | » |
| IV | » | 16 | » |
| V | » | 15 | » |

Ընդամենը՝ 123 աշակ.

Տարուայ զանազան ժամանակներում արհեստանոցից հեռացան 18 աշակերտուհի հետեւեալ պատճառներով.

| | | |
|---|---|---|
| Հիւանդացան | 5 | աշակ. |
| Ընտանեկան հանգամանքներից ստիպուած հեռացան | 6 | » |
| Մտան այլ արհեստանոց | 2 | » |
| Ամուսնացան | 3 | » |
| Վախճանուեցին | 2 | » |

Բոլոր աշակերտուհիների ծնողներին ըստ պարապմունքի կարելի է հետեւեալ դասակարգերի բաժանել.

| | |
|---|---|
| Արհեստաւոր | 54 |
| Վաճառական | 10 |
| Մանրավաճառ | 28 |
| Գործակատար | 7 |
| Բանուոր | 7 |
| Ծառայող գրասենեակում | 2 |
| Հոգեւորական | 3 |

Մնացեալ 14 աշակերտուհիների ծնողները հաստատ պարապմունք չունին կամ հիւանդութեան պատճառով զուրկ են աշխատելու ընդունակութիւնից։

Արհեստանոցի որբերի թիւն է՝ 8, իսկ կիսաորբերի, որոնք զուրկ են հօրից՝ 31.

Արհեստանոցի աշակերտուհիները, բացի I նախապատրաստական բաժանմունքից, որտեղ պատուէրներ չեն ընդունում՝ կարել են հետեւեալ պատուէրները և վաստակել են.

| | |
|---|---|
| II բաժ. կարել է 244 կանանց և մանկական սպիտակեղէն և վաստակել է . . . . . | 109 ռ. 60 կ. |
| III բաժ. կարել է 121 նշանագիր հարթակարով և 41 կտոր մանկական զգեստ և վաստակել է . . . . . . . . . . . | 81 ռ. 65 կ. |
| IV և V բաժ. կարել են 54 ամբողջ զգեստ, 24 շրջազգեստ, 50 բլուզ կանանց, 2 կտոր վերանորոգել և վաստակել են . . . . | 750 ռ. 70 կ. |
| Ընդամենը . | 941 ռ. 95 կ. |

Բացի պատուէրներից, բոլոր աշակերտուհիները պատրաստել են նաև մանկական և կանանց սպիտակեղէն, մանկական զգեստներ և գոգնոցներ և կանանց բլուզներ տարեկան սովորական վաճառքի համար, որ տեղի է ունենում ընդհանուր ժողովի օրը:

Տարուայ ընթացքում ամեն մի աշակերտուհի բացակայել է միջին թուով 14 օր:

Տարուայ վերջը աշակերտուհիները հետեւեալ յառաջադիմութիւնը ցոյց տուին.

| | |
|---|---|
| Փոխադրուեցին հետեւեալ բաժանմունք . . . . | 81 աշակ. |
| Մնացին նոյն բաժանմունքում . . . . . . . | 11 » |
| Աւարտեցին և ստացան վարպետուհու վկայական. | 13 » |

Աւարտած վարպետուհիներից մէկը արհեստանոց բաց արեց, մէկը շարունակում է ուսումը նկարչական դպրոցում, մէկը ամուսնացաւ, իսկ մնացած 10 հոգին առ այժմ պատուէրներ են ընդունում տանը կամ գնում են ընտանիքներ՝ օրով բանելու:

Արհեստանոցի ուսուցչական խումբը, որ բաղկացած է 8 վարժուհուց և մի աւագ վարժուհուց, տարուայ ընթացքում ունեցել է մանկավարժական ժողովի 5 նիստ, երբեմն վարչութեան անդամների ներկայութեամբ, որտեղ արծարծուել և վճռուել են մանկա-



վարժական և արհեստագիտական խնդիրներ արհեստանոցին վերաբերեալ:

Չքաւոր աշակերտուհիների թիւն էր—21, որոնք ստացել են կօշիկ, զգեստ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյքներ և դեղօրայք. սոցա թւումն են և ընկերութեան բարերարուհիների անուան 7 թոշակառու աշակերտուհիք:

Պարապմունքը սկսուել է սեպտեմբերի 1-ին և վերջացել է յունիսի 5-ին:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ Է.

1) Նախորդ 1905 տարուայ, մարտի 27-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը։

3) Ընկերութեան գումարների հաշիւը վասն 1905 թ.

4) Վարչութեան գործունէութեան հաշիւը վասն 1905 թ.

5) 1906 թ. նախահաշուի ընթերցումը և վաւերացումը։

6) Վարչութիւնից հերթով դուրս եկող 3 անդամի և 5 փոխանդամի ընտրութիւնը։

7) Վերաստուգող յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխանդամի ընտրութիւնը։

8) Ընկերութեան կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկելու խնդիրը։

2013

ՀՀ Ազգային գրադարան

16446

NL0049355